



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝  
Շրջակա միջավայրի նախարարի  
պարտականությունները կարտարող  
Արամ Մեյմարյան



*Handwritten signature of Aram Meymaryan*

«19» 09 2024թ.

## ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ N 191 - 24

Նախաձեռնող՝

«ՍԱԹԷ» ՍՊԸ  
Ք. Երևան Վերին Անպատային փ. 2. 19բ

Գործունեությունը՝

Արարարի ավագակոպճային խառնուրդի  
հանքերակման «Նաիրի» տեղամասում 2024-2025թթ.  
ընթացքում երկրաբանական ուսումնասիրության  
աշխատանքներ  
Արարարի մարզ

Առդիր՝ 5 թերթ

**ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵՃՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ**  
**ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱՃԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ**

**ԲՓ № 191 - 24**

**« 19 » սեպտեմբեր 2024թ.**

**Արարատի մարզի Արարատի ավազակոպճային խառնուրդի հանքերևակման «Նաիրի» տեղամասում 2024-2025թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ**

Ձեռնարկող՝	«ՍԱԹԷ» ՍՊԸ
Ներկայացված նյութեր՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտ, ծրագիր /Բ կատեգորիա/
Գործունեության տեսակը՝	
Գտնվելու վայրը՝	Արարատի մարզ, Արարատ համայնք Արարատ բնակավայր

**Ներածական մաս** Արարատի ավազակոպճային խառնուրդի հանքերևակման «Նաիրի» տեղամասը գտնվում է Արարատի մարզում՝ Արարատ քաղաքից մոտ 7,0 կմ հարավ-արևելք և Արարատ գյուղից մոտ 4,4 կմ հարավ: Տեղամասը մայրաքաղաք Երևանի հետ կապված է մոտ 4.5 կմ երկարությամբ բնահողային և շուրջ 50 կմ երկարությամբ Մ-2 միջպետական նշանակության ավտոմայրուղով: Երկաթգծի Արարատ կայարանը տեղամասից գտնվում է մոտ 7.0 կմ հեռավորության վրա:

Երևակման տեղամասում նախատեսվում է կատարել 1:1000 մասշտաբի տոպոգրաֆիական և երկրաբանական հանույթ՝ 50 հա տարածքի վրա՝ հետախուզական փորվածքների և նմուշարկման տեղերի, ապարների երկրաբանական սահմանների գործիքային տեղադրմամբ:

Համաձայն «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2-րդ կետի ա. ենթակետի՝ հանդիսանում է Բ կատեգորիայի գործունեության տեսակ:

**Նկարագրական մաս.** Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքները նախատեսվում է իրականացնել Արարատ գյուղի վարչական տարածքում գտնվող մոտ 50 հա մակերեսով տեղամասում, որը սահմանափակվում է հետևյալ կողողինատներով (ARM WGS-84 համակարգով)

1. X = 4405693.8    Y = 8473955.6
2. X = 4405382.7    Y = 8474352.7
3. X = 4404950.0    Y = 8474603.2



4. X = 4404714.5 Y = 8474934.8

5. X = 4404705.7 Y = 8474601.0

6. X = 4405246.9 Y = 8473575.8

Հետախուզական աշխատանքները նախատեսվում է իրականացնել մոտ 8 մ խորությամբ 27 հետախուզահորերի միջոցով: Հետախուզահորերի ծավալը կկազմի  $27 \times 8 = 216$  գծ.մ կամ  $2.25 \times 27 \times 8 = 486$  խմ: Հետախուզվող տարածքի բարդ եզրագծերի պարագայում, հետախուզական փորվածքները նախատեսվում է հնարավորինս տեղադրել հատկացված տարածքի եզրակետերում: Հետախուզական ցանցի համաչափ խտությունն ապահովելու նպատակով՝ 27-ից 8 հետախուզահոր կանցկացվի տեղամասի միջնամասում:

Տեղամասում ձևավորված հետախուզական ցանցի խտությունը՝ հետախուզագծերի միջև 150-250 մ, թույլ կտա տալ օգտակար հանածոյի որակական և քանակական գնահատականը, իսկ հետախուզած պաշարները գնահատել ըստ արդյունաբերական B+C1 կարգի: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է տեղամասում անցած հետախուզահորերի 486 խմ ծավալից 60 խմ-ն օգտագործել կուտակի բնական խտության (բնամասում), ծավալալիքային զանգվածի և փխրեցման գործակցի որոշման համար: Մանրամասն երկրաբանական փաստագրման ենթակա են բոլոր հետախուզահորերը, ընդհանուր 216 մ երկարությամբ: Երկրաբանական փաստագրման աշխատանքներ նախատեսվում է կատարել 1: 100 մասշտաբով:

Ֆիզիկամեխանիկական ուսումնասիրությունների նպատակով հետախուզահորերից նախատեսվում է վերցնել 27 նմուշ՝ ակոսային եղանակով (մեկական՝ յուրաքանչյուր փորվածքից): Նմուշները նախատեսվում է վերցնել հետախուզահորի պատից, օգտակար հաստվածքի ամբողջ հզորությամբ (ավազակուտակի հզորությունը ակնկալվում է մինչև 4-5 մ)՝ ակոսի 5x10 սմ կտրվածքով: Նախքան լաբորատորիա ուղարկելը նմուշները տեղում կենթարկվեն մշակման: Նմուշների մշակումը կկատարվի հետևյալ կերպ՝ նմուշարկված ամբողջ ԱԿԽ-ն կլցվի բրեզենտե փովածքի վրա, կխառնվի և միանգամյա կրճատման միջոցով կհասցվի 15 կգ, որը և կկազմի նմուշի նյութը: Վերջինս կլցվի առանձին պարկերի մեջ, կպիտակավորվի և նոր միայն կուղարկվի լաբորատորիա՝ ֆիզիկամեխանիկական փորձարկումների համար:

Դրանցից 3 նմուշ կենթարկվի նաև քիմիական անալիզի և 3 նմուշ՝ միներալային կազմի ուսումնասիրությունների: Քիմիական և միներալոպետրոգրաֆիական ուսումնասիրությունները կիրականացվեն ՀՀ ԳԱԱ երկրաբանական գիտությունների ինստիտուտում՝ պայմանագրային հիմունքներով:

Հանքավայրի հիդրոերկրաբանական և ինժեներաերկրաբանական պայմանների պարզաբանման նպատակով դաշտային աշխատանքների ընթացքում նախատեսվում է կատարել համապատասխան դիտարկումներ:

Ինժեներաերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է պարզել տեղամասի ապարների կազմը, դրանց կառուցվածքային առանձնահատկությունները, անիզոտրոպիան, և պարզաբանել տեղանքի գեոդինամիկ պրոցեսները:

Հիդրոերկրաբանական հետազոտություններով նախատեսվում է հետազոտել հիմնական ջրատար հորիզոնները, եթե այդպիսիք կան ապա ուսումնասիրել և նկարագրել դրանք:



Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների ավարտից հետո նախատեսվում է ռեկուլտիվացիայի աշխատանքներ: Ռեկուլտիվացիայի գումարը 1 քմ մակերեսի համար կկազմի 2600 ՀՀ դրամ, վերականգման ենթակա ընդհանուր՝ 60.75 քմ մակերեսի համար գումարը կկազմի 60.75 քմ x 2600 ՀՀ դր = 157950 ՀՀ դրամ: Բացի տեխնիկական ռեկուլտիվացիայից՝ նախատեսվում է նաև կենսաբանական վերականգնում՝ 60.75 քմ մակերեսի համար, որի ծախսը կկազմի՝  $0,006075 \times 400000 = 2430$  ՀՀ դրամ: Ընդամենը ռեկուլտիվացման գումարը /լեռնատեխնիկական և կենսաբանական/ կկազմի 160380 ՀՀ դրամ: Կենսաբանական ռեկուլտիվացիայի նպատակով տարածքում կկատարվի նաև տարածքին բնորոշ խոտային բուսականության սերմերի ցանք: Այդ աշխատանքները կատարվելու են ձեռքով: 1 հա տարածքի կենսաբանական վերականգնման անհրաժեշտ գումարը կազմում է 400000 ՀՀ դրամ:

Ըստ ներկայացված հայտի՝ հայցվող տարածքը ներառված չէ բնության հատուկ պահպանվող տարածքների, կամ բնության հուշարձանների սահմաններում:

Հայցվող տարածքում չեն արձանագրվել նաև ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գրքերում գրանցված տեսակներ:

**Շրջակա միջավայրի բաղադրիչների վրա վնասակար ազդեցության մեղմացման/վերացման նպատակով նախատեսվում են հետևյալ բնապահպանական միջոցառումները.**

- օգտագործված յուղերի ու քսայուղերի հավաքում առանձին տարաների մեջ՝ հետագա ուտիլիզացման կամ երկրորդական վերամշակման համար,

- կենցաղային աղբի տեղափոխվում մոտակա աղբահավաք կետեր,

- փոշենստեցման նպատակով փոշեառաջացման օջախների (մուտքային ավտոճանապարհը և այլն) ինտենսիվ ջրում տարվա չոր և շոգ եղանակներին,

- Նախատեսվում է պահպանել առողջապահության նախարարի 2012 թվականի սեպտեմբերի 19-ի թիվ 15-Ն հրամանով հաստատված սանիտարական կանոնների և նորմերի պահանջները,

- ջրցանի այնպիսի ծավալներնի նախատեսում, որ արտահոսք չառաջանա,

- բացառվում է ջրային ռեսուրսի հատակների, ափերի, հոսքի կամ հատկությունների փոփոխում,

- երկրաբանական ուսումնասիրության ընթացքում չի նախատեսվում փոփոխել,

ձևափոխել կամ այլ կերպ օգտագործել ջրային ռեսուրսի հունը կամ ափերը,

- նախատեսվում է խախտված հողատարածքների վերականգնման ծախսերի հաշվարկները կատարելու ժամանակ առաջնորդվել Կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ին ընդունված «ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» N1352-Ն որոշման պահանջներով,

- առաջնորդվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունվարի 20-ի N64-Ն որոշման պահանջներով,

ՀՀ Կարմիր գրքերում գրանցված բուսական և կենդանական տեսակներ բացահայտման նպատակով: Նման բուսատեսակների պոպուլյացիաների հայտնաբերման պահպանության նպատակով նախատեսվում է.



1) առանձնացնել պահպանվող գոտիներ, որոնք ունեն տեղական նշանակություն և անհրաժեշտ են Կարմիր գրքում գրանցված բուսատեսակների՝ սույն կետում նշված նոր պոպուլյացիաների կենսունակության ապահովման նպատակով,

2) ժամանակավորապես սահմանափակել առանձնացված պահպանվող գոտիներում տնտեսական գործունեության որոշ տեսակներ, եթե դրանք կարող են բերել նշված բուսատեսակների աճելավայրերի վիճակի վատթարացմանն ու պոպուլյացիաների կենսունակության խաթարմանը,

3) տեղափոխել պահպանվող բույսերի առանձնյակները տվյալ տեսակի համար նպաստավոր բնակլիմայական պայմաններ ունեցող որևէ բնության հատուկ պահպանվող տարածք կամ բուսաբանական այգիների տարածք, կամ Կարմիր գրքում որպես տվյալ բույսի աճելավայրեր գրանցված որևէ տարածք, իսկ բույսերի սերմերը տրամադրում են համապատասխան մասնագիտացված կազմակերպությանը՝ գենետիկական բանկում պահելու և հետագայում տեսակի վերարտադրությունը կազմակերպելու նպատակով:

Երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ժամանակ ընկերությունը նախատեսելու է շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցության կանխարգելմանն և մեղմացմանն ուղղված հետևյալ մշտադիտարկումները.

1. մթնոլորտային օդ կատարվող աղտոտող նյութերի արտանետումների որակական և քանակական պարամետրերի պարբերական չափումներ՝ շաբաթական մեկ անգամ,
2. հողային ծածկույթի պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,
3. վայրի բնություն, կենսամիջավայր, Կարմիր գրքում ընդգրկված, էնդեմիկ տեսակների պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,
4. ջրային ռեսուրսների պարբերական մշտադիտարկումներ՝ տարին մեկ անգամ,

Բնապահպանական միջոցառումների համար նախատեսվում է տարեկան մասնահանել 300.0 հազ. ՀՀ դրամ, իսկ մշտադիտարկումների համար նախատեսված է 250,0 հազ. ՀՀ դրամ:

**Պատճառաբանական մաս.** Հայտի փորձաքննություն իրականացվել է ՀՕ-110-Ն օրենքի պահանջներով, օրենսդրությամբ սահմանված կարգով, փորձաքննության գործընթացում, Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ բնակավայրում անցկացված հանրային քննարկման ընթացքում գործունեության իրականացումը տեղական ինքնակառավարման մարմինների և մասնակիցների կողմից արժանացել է հավանության: Հայտի վերաբերյալ փորձաքննական գործընթացում ստացվել են կարծիքներ՝ պաշտպանության, ներքին գործերի, առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություններից, ազգային անվտանգության ծառայությունից, կադաստրի կոմիտեից, Արարատի մարզպետարանից, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումներից:

Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել հայտի լրամշակումներում:

Ամփոփելով հայտի բնապահպանական և սոցիալական ազդեցությունների վերլուծությունները՝ կարելի է եզրահանգել, որ շրջակա միջավայրի վրա հնարավոր բացասական ազդեցությունները, որոնք կառաջանան նախատեսվող գործունեության աշխատանքների իրականացման արդյունքում, կկրեն ժամանակավոր և տեղայնացված բնույթ և կլինեն թույլատրելի նորմերի սահմաններում: Դրանք կարող են բացառվել կամ



մեղմվել գործունեության ընթացքում բնապահպանական միջոցառումների արդյունավետ իրականացմամբ:

### Փորձաքննական պահանջներ

1. Երկրանական ուսումնասիրության իրականացման ընթացքում անհրաժեշտ է պարբերաբար իրականացնել շրջակա միջավայրի բաղադրիչների մոնիթորինգ և արդյունքները, Կառավարության 2018 թվականի փետրվարի 22-ի N191-Ն որոշմամբ սահմանված ժամկետներում և ձևաչափով, ներկայացնել շրջակա միջավայրի նախարարություն:

2. Երկրանական ուսումնասիրության աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է խստագույնս հետևել նախնական գնահատման հայտում ամրագրված բնապահպանական միջոցառումների իրականացմանը, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ապահովելով բնապահպանական նորմերը:

3. Անհրաժեշտ է ապահովել հայտով նախատեսված ռեկուլտիվացիայի աշխատանքների իրականացումը:

4. ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի «Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման և օգտագործման կարգը հաստատելու մասին» N438 որոշմամբ հաստատված կարգի 43-րդ կետի համաձայն՝ աշխատանքների կատարման ժամանակ պատմական, գիտական, գեղարվեստական և այլ մշակութային արժեք ունեցող հնագիտական և մյուս օբյեկտների հայտնաբերման պահից անհրաժեշտ է դադարեցնել աշխատանքները և դրա մասին անհապաղ տեղեկացնել լիազոր մարմին՝ համապատասխան պահպանական միջոցառումներ իրականացնելու համար:

### ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«ՍԱԹԷ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Արարատի մարզի Արարատի ավազակոպճային խառնուրդի հանքերևակման «Նաիրի» տեղամասում 2024-2025թթ. ընթացքում երկրաբանական ուսումնասիրության աշխատանքների շրջակա միջավայրի վրա ազդեցության նախնական գնահատման հայտի վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի տեղակալ՝

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի՝ առաջին կարգի մասնագետ՝



Խաչիկ Մարտիրոսյան

Հերիքնազ Մկրտչյան

Էլեն Մկրտչյան